ԴԻՍԵՐՏԱՑԻԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1951 թ. նոյեմբերի 3-ին Հայկական ՍՍՌ ԳԱ-ի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի նիստ։

Նիստում լսվեց Պատմության ինստիտուտի հնագիտության և էպիգրաֆիայի սեկտորի ասպիրանտ ընկ. Հարություն Մարտիրոսյանի և նույն սեկտորի գիտ. աշխատակից Եվգենիա Մուշեղյանի դիսերտացիաների հրապարակային պաշտպանությունը։

Ընկ. Հ. Մարտիրոսյանի դիսերտացիայի թեման էր «Հարավային Անդրկովկասի կուլտուրան մեր թվականությունից առաջ 7—6-րդ դարերում՝ ըստ հնագիտական տվյալների»։

Սույն ուսումնասիրության համար դիսերտանտը լայնորեն օգտագործել է ուրարտական Տեյշեբաինի (Կարմիր բլուր) քաղաքի պեղումների ընթացքում հայտնաբերված նյութական կուլտուրայի մնացորդները։

Իր հետազոտության ընթացքում դիսերտանտը հանգել է հետևյալ եզրակացություններին. 7—6-րդ դարերում (մեր թ. ա.) Հարավային Անդրկովկասի բնակիչների կյանքում նկատվող մի շարք երևույթներ վկայում են այդ բնակիչների նյութական և հոգևոր կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունների մասին։ Երկրագործության ու անասնապահության, արհեստների ու միջհամայնքային փոխանակության ինտենսիվ աճը անհրաժեշտ պայմաններ են ստեղծել, որպեսզի Հարավային Անդրկովկասի հասարակությունն անցներ հասարակական զարգացման ավելի բարձր աստիճանի։

Դամբարանների ու բնակավայրերի պեղումների ընթացքում հայտնաբերված երկաթե ու բրոնզե գյուղատնտեսական գործիքները, փայտե կալսիչները վկայում են մասնավոր սեփականության սաղմնային զարգացման մասին այդ դարերում։ Մասնավոր սեփականությունը պատրիարխալ իրավունքի պայմաններում աստիճանաբար կուտակվում է առանձին մեծ գերդաստանների մոտ, որոնց էլ հանձնվում են գյուղական համայնքի իրավասության տակ գտնվող՝ մշակման ենթակա հողերը։ Դրանով էլ աստիճանաբար չքանում է հողի համայնական մշակման ձևը։

7—6-րդ դարերի տնտեսության հիմնական ձևերից մեկն էլ եղել է անասնապահությունը, որի զարգացման հիման վրա ուժեղանում է գույքային անհավասարությունը տարբեր ցեղերի միջև։

Անասնապահության զարգացումը ապահովում է բնակչությանը ոչ միայն մսով ու կաթնամթերքով, այլև հումքով, որը բազա է հանդիսանում մանածագործության և կաշեգործության համար։ Արհեստները հասնում են բարձր զարգացման, արհեստավորները դառնում են առաջին «առևտրականները» և տարածում իրենց արտադրանքը ոչ միայն Անդրկովկասում, այլև նրա սահմաններից դուրս։

Այդ ժամանակաշրջանի նյութական կուլտուրայում առաջնակարգ դեր է կատարում երկաթի մշակումն ու լայն տարածումը, որը տնտեսությունից դուրս է մղում բրոնզե ու քարե գործիքներն ու զենքերը և նախնադարյան մարդուն զինում է բնության դեմ պայքարելու նոր և հզոր միջոցներով։

Դամբարանների ուսումնասիրությունը թույլ է տալիս ուրվագծելու նաև հարավ անդրկովկասյան հասարակության սոցիալական կյանքի ընդհանուր պատկերը։

Երկաթի լայն տարածման ժամանակաշրջանում հարավ անդրկովկասյան հասարակության մեջ հանդես է գալիս բազմաթիվ ստրուկներ ունեցող մարդկանց բավականաչափ ստվար մի շերտ։ Մասնավոր սեփականության ձգտումը, հողակտորների մշակումը առանձին գերդաստաններով, հարստության կուտակումը նոանց մոտ և ապրանքային հարաբերությունների թափանցումը վերջնականապես բայքայում են նախնադարյան համայնական հարաբերությունները։

Դիսերտանտ Հ. Մարտիրոսյանի պաշտոնական օպոնենտներ ակադեմիկոս Ի. Օրբելին և պատմ. գիտ. թեկնածու Կ. Ղաֆադարյանն իրենց ելույթներում նշեցին, որ հեղինակին հաջողվել է անհրաժեշտ կապ ստեղծել այսպես կոչված «նախապատմական», գրավոր աղբյուրներով չլուսաբանված ժամանակաշրջանին վերաբերող շրջանի և մեր պատմության սկզբնավորությանը վերաբերող գրավոր հուշարձաններով հաստատված շրջանի միջև։

Դիսերտանտի արած եզրակացությունները հիմնավորված են նրա գիտականորեն ու բարեխիղճ կերպով կատարած պեղումների արդյունքներով 7—6-րդ դարերին պատկանող դամբարանների ու նյութական կուլտուրայի այլ հուշարձանների մանրազնին ուսումնասի-

թյամբ։ Այդ բոլոր տվյալները, առաջին անգամ, ի մի են հավաքված ու քննված հեղինակի կողմից։

Իբրև առանձին թերություն նշվեց այն, որ ժամանակի սոցիալ-տնտեսական միջավայրն ուրվագծելիս, հեղինակն, ինչպես նաև շատ ուրիշ հնագետներ, հենվում են գերազանցապես դամբարաններից պեղված նյութի վրա, անհրաժեշտ ուշադրություն չդարձնելով բնակավայրերի պեղումների վրա։

Դիսերտացիայի պաշտպանության ժամանակ ընթերցվեցին Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր պրոֆեսոր Բ. Բ. Պիոտրովսկու և ՍՍՌՄ ԳԱ Նյութական կուլտուրայի ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Ա. Ա. Իսսսենի գրավոր կարծիքները։

Գիտական խորհուրդը փակ գաղտնի քվեարկությամբ ընկ. Մարտիրոսյանին շնորհեց պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

Գիտական խուրհուրդը լսեց նաև ընկ. Ե. Մուշեղյանի դիսերտացիայի հրապարակային պաշտպանությունը։ Ընկ. Մուշեղյանի դիսերտացիայի թեման էր «Գեղարքունիքը և նրա վիմական արձանագրությունները»։ Այս աշխատությունը բաղկացած է 3 գլուխներից։ Առաջին գլխում հեղինակը փորձել է մատենագրական տեղեկությունների հիման վրա տալ Գեղարքունիքի 9—19-րդ դարերի պատմությունը։ Երկրորդ գլուխը նվիրված է Գեղարքունիքի հնավայրերին։ Հեղինակը մատենագրական տեղեկությունների հետ միասին օգտագործել է նաև վիմական արձանագրությունները։ Նա հնավայրերը դասակարգել է ըստ տիպերի, որոնք են՝ աշխարհիկ ֆեոդալների բնակավայրեր, հոգևոր ֆեոդալների տնտեսության կենտրոններ (վանքեր, եկեղեցիներ) և գյուղատիպ բնակավայրեր։

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է Գեղարքունիքի վիմական արձանագրություններին։ Քննության են առնվում 150 արձանագրություններ, որոնց մեծ մասը 1-ին անգամ հրատարակվում է հեղինակի կողմից։

Արձանագրությունների անալիզը հեղինակին թույլ է տվել պարզելու տնտեսության այն ճյուղերը, որոնք գոյություն են ունեցել Գեղարքունիքում (ձկնորսություն, հողագործություն, անասնապահություն և այլն)։ Դիսերտանտին հաջողվել է պարզաբանել արձանագրություններում հանդիպող մի շարք սոցիալական տերմիններ։ Սկզբնաղբյուրներն օգտագործելիս հեղինակը ցուցաբերել է առողջ քննադատական վերաբերմունք. նա հաճախ մերժելով տիրող տեսակետները, առաջարկում է իր սեփական դրույթներն ու եզրակացությունները։

Դիսերտանտ Ե. Մուշեղյանի պաշտոնական օպոնենտներ, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկը և պատմ. գիտ. թեկնածու Ռ. Ս. Առաքելյանը նշեցին, որ հիմնական նյութի՝ վիմական արձանագրությունների հրատարակության գործում հեղինակն սկզբունք է ընդունել, դասավորել նրանց ընդօրինակները ոչ թե ժամանակագրական կարգով կամ ըստ բովանդակության, այլ ըստ բնակավայրերի և ճուշարձանների. մի մեկ, որը պրոֆեսոր Մելիքսեթ-Բեկը ճիշտ համարեց։ Աշխատությունը իբրև մի գավառի պատմագիտական և արձանագրական նյութեր քննարկող և ամփոփող գործ, հետաքրքիր է ու արժեքավոր։ Դիսերտանտը ցուցաբերել է հնագիտական և արձանագրական նյութեր հավաքելու և տվյալ գավառի պատմությունը գիտականորեն շարադրելու կարողություն։

Վերոհիշյալ արժեքների հետ միասին պաշտոնական օպոնենտները նշեցին աշխատության մեջ տեղ գտած մի քանի թերություններ։ Այսպես, օրինակ, հեղինակն անտեսել և չի հավաքել Գեղարքունիքի 13—17-րդ դարերի խաչքարերի և տապանաքարերի վրա հանդիպող պատկերաքանդակները, որոնք վերին աստիճանի կարևոր աղբյուր են հանդիսանում գավառի բնակչության կենցաղի ուսումնասիրության համար։ Թերություն է նաև այն, որ աշխատությանը չի կցված իլյուստրացիոն նյութ, այսինքն լուսանկարներ։ Առանց դրան դժվար է ստուգել հեղինակի այս կամ այն ընթերցումը։

Պաշտոնական օպոնենտները իրենց ելույթներում նշեցին, որ եղած թերություններով հանդերձ ընկ. Ե. Մուշեղյանի «Գեղարքունիքը և նրա վիմական արձանագրությունները» դիսերտացիոն աշխատությունը բարեխղճորեն կատարված աշխատանք է և արժանի է գնահատության։

Ելույթ ունեցան նաև ակադեմիկոս Ի. Ա. Օրբելին և պատմ. գիտ. թեկնածու Կ. Գ. Ղաֆադարյանը, որոնք նույնպես ըստ արժանվույն գնահատեցին ընկ. Ե. Մուշեղյանի կատարած աշխատանքը։

Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը փակ գաղտնի քվեարկությամբ ընկ. Ե. Ա. Մուշեղյանին շնորհեց պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ